



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Արմեն.



ՎԵՐՈՒԹՅԻՆ ԵՍԱՅԵԱՆ

ԳՐԴԱՐԱՆ ՄԱՍՆԻԿ

(ազատ/կեր)

• • •

ԹԻՖԼԻԶ 1904

Ա. ՀԱՅՐԱՎԵՍԻ գիլ. Խովար. փող., 15.
(69)

891. 99.

Հ - 58

Թիվ 10980
10 NOV 2011

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

891.99+2-3 ԱՐ

Տ-58

90
XII 2014.թ.

ԹՇՈՒԱԲՆԵՐԸ

1001
805

(պատկեր)

Թիվ 10980 10 NOV 2011

Տպարան „ՀԵՐՄԱՆ“ Ընկ. Մադար. փող., 15.
(69)

08 .04. 2013

28606

ԱՅՍ ՎՈՐ ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐԺԱՐ

Дозволено цензурою, 16 Ноября 1904 года. г. Тифлисъ.

(Այսուհետ)

ԽՈՐ ԶԱՅԵԼՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
(ՀՅ)

առաջ մարդունք ու առաջ պայման
և առաջ պատման վիճակի առաջարկությանը պայման
պատման առաջ վիճակի առաջ պատմանը պատմանը
պատմանը պատմանը պատմանը պատմանը
ԹՇԱԿԱՑՈՒԵՐԸ

Ա շնանամուտ գիշերներից մէկն է աներւ
կինքը ծածկված. է թանձր թխպեսով կերից
մաղում է մանր անձրևու Ապաղերը
բոլորովին թագնված ամպերի ետևում
իրանց ազօտ լոյօր կորցնուած են նրանց թան-
ձրութեան մէջ. Գիշերային խաւարը ընդ-
գրկել է բնութիւնը. մարդիկ պատսպարվել
են իրանց բնակաբաններում և գտնվում են
քաղցր քնի գրկում. Գրում չեն երեսում ոչ
մարդ և ոչ անասուն. Թեթև, բայց մի տես-
ակ փշաբազող, ցուրտը և լալկան բնութիւնը
շնչաւորներին քշել, բներն են կոխել: Եւ այդ
խաւարի մէջ լոելիք է միայն անձրեսի խուլ
շնորհը և նրանից գոյացած սելափի քը քնոցը,
որ միախառնվերով խաւարի անհաճոյ տպա-
ւորութեան հետ՝ առելի խորհրդաւոր և սար-
պեցուցիչ էր գարձնուած շրջապատը: Այս

Քաղաքի հարուստ դասակարգի հոյա-
կալ, պալատանման շինութիւնների ետևում,
սարի վրա կանգնած էր մի գծուձ տնակ-
նրանից էլ բարձր շինութիւն չը կար. նա ա-
մենավերջինն էր։ Մի փայտեայ խուզ էր նա,
որի նմանը հովիւները ամառ ժամանակ շի-
նում են սարի գլխին կամ դաշտի միջին, իբր
ժամանակաւոր կացարան։ Լերան կրծքի լերկ
հողի վրա հինաւուրց շինած աղիւսէ պա-
սերի վրա ծածկած էր տախտակէ առաստաղ՝
վրան հին ցնցոտիներ ու խոտ փռած՝ անձ-
րեից և արեից պաշտպանելու համար։ Վե-
րին պատը ժամանակի ընթացքում սարից
հոսող հեղեղի շնորհիւ մասամբ քանդվել էր,
միացածն էլ կիսախարիսուլ գրաւթեան մէջ էր։
Գնասված մասը փոխարինված էր մի երկու
փթած փայտերով, կուտակած քարերով և
ժանդու ժեստերով։

Խրճիթի մէջ ոչ մի պիտանի կահկա-
րասիք չը կար։ Մի երկայն հին, հազար կար-
կատաններով լի, գորդ փռված էր թաց գետ-
նին, մի կողմում՝ նոյնպէս յատակի վրա դըր-
ված էին մի երկու կոտրտած ափսէներ, գդալ-
ներ, ճրագ, որ գեռ վառվում էր և իր թոյլ

լուսով տեսանելի կացուցանում դառն աղ-
քատութեան այդ կենսամաշ բոյնը։ Գիւղա-
կան համեստ խրճիթն իր պարզ ու աղքա-
տիկ կահաւորութեամբ այս մարդաբոյնի հետ
համեմատած՝ արքունիք էր։

Յատակի վրա պատառոտած, հին ան-
կողիններում իրար մօտ կարգով պառկած էին
այդ տան բնակիչները։ Նրանք էին՝ մի հա-
սակաւորմիջին տարիների տղամարդ, երեք
փոքրիկ մանուկներ և մի նիհար, դալկացած
կին։

Յոլորն էլ սեղմվել կուչ էին եղել ցըր-
տից ու խոնաւութիւնից, որոնք անարդել
ներս էին թափանցում պատերի ու առաս-
տաղի խոշոր բացւածքներից։ Հեղեղը, փորե-
լով պատի թոյլ հողը, անկոչ հիւրի նման
ներս էր հոսում խրճիթը, թաց անում տղա-
մարդի պառկած անկողինը և ապա՝ մի քա-
նի պայտաներ գործելով միւս պատի տակից
գուրս ծլկվում . . .

Խեղճ մանուկներն ինքնաբերաբար մի-
մեանց մօտեցել, մէջքմէջքի էին տվել և
այնպէս կուչ եկել, որ վերմակի տակից նման-
գում էին գնդակների. Նրանք ոչինչ չէին ըզ-

գում, խոր քունը, մի քանի ժամ անզդաշյացրել էր նրանց թոյլ մասմինները և մոռացնել ավել քաղցն ու ծարաւը: Նրանց հիւանդ հայրը հազում էր և անքում, մայրը անքուն էր, թէև աշխատում էր քնել և մոռանալ արտաքին աշխարհը:

Անձրել ոչ միայն չը դադարեց, այլ ընդհակառակն, սաստկացաւ, տեղատարափի չարագուշակ շշուկն աւելի մեծացաւ... հեղեղաջուրը սկսեց առատօրէն ներս հոսել, առաստաղից էլ սկսեց կաթել. այս կաթիւններից մէկն ուղիղ ընկաւ պառկած կնոջ երեսին, որը ցնցվելով ջրի յանկարծական սառնութիւնից աչքերը բացեց և վեր թռաւ, առան ինչ պարզ էր նրա համար. «Ախ, Տէր Աստուած, ինչո՞ւ ես պատժում մեզ...»:

Այդ միջոցին հիւանդը կրկին սկսեց հազար սաստիկ կերպով, որից յետոյ լսվեցին մի քանի անքոյններ, կինը նայեց նրա վրա, մորմոքվող սրտով վեր ցատկեց, մօտեցաւ նրան՝ վերմակը սւղելու, բայց ի՞նչ տեսաւ. — հիւանդն ամբողջովին թաթախված էր ցեխախառն ջրի մէջ: Ուժասպառ կինը կանացի թոյլ ոյժերով շտապով, սակայն գդուշու-

թեամբ, մի կողմ քաշքշեց հիւանդին, որ արդէն հետղնետէ հալվում էր և հանգչելուն մօտենում... Նա նայեց պատի բացւածքից տեսնելու, թէ արդեօք լուսացելէ, որպէսզի բաց անէ դուռը, դրսից կապէ ջրի ճամբան, բայց դեռ իսպառ չէր փարատիլ խաւարը. մոթն ու լոյսը կովում էին իշրար հետ:

Թէև նա վախում էր այդպիսի մի ժամանակ մենակ դուրս ելնել, այն էլ քաղաքի ծայրին սարի վրա, սակայն ամուր սէրը մօռացնել տվեց նրան վախ ու երկիւզ, և նա դուռը բացեց, բորիկ ստներով դուրս վազեց մթութեան մէջ, սկսեց ջրի ճամբան բացել՝ պատի անցքին կուտակելով ցեխ ու քար: Նա ամողջովին թրջված, կեղտոտված ներս մտաւ ու դուռը կրկին փակեց: Թէև հեղեղն այլ ես չէր հօսում ներս, բայց առաստաղից շարունակում էր կաթել, հարկաւոր էր դրա առաջն էլ առնել, բայց ի՞նչպէս. մտածեց, մտածեց թշուառ կինը, բայց կաթիւրի առաջն առնելու հնար չը գլաւաւ...»

Նա դողդոջուն ծնկնելով կանգնեց, աշ-

քերը նետեց զեր՝ առաստաղին և կիսամերկ
ձեռները փարելով սկսեց աղօթել:

—Տէր իմ, թշուառների ու աղքատների Հայր, միթէ չես տեսնում, չես խղճում
մեզ, այս անմեղ մանուկներին, այս ցաւա-
տանջ, հիւծված հօրը. ինչո՞ւ են մեղաւոր,
Տէր, որ տանջփում են անխնայ կերպով. մի
դարձնիր Քո երեսը մեզանից, գոնէ առող-
ջութիւն պարգևիր այս դժբախտ, չարքաշ հօ-
րը, որ կարողանայ սեփհական ջանքով, աղ-
նիւ ճանապարհով մի կտոր հաց վաստակել
իր մատաղ զաւակների համար:

Արտասուքը խեղդեց նրա կոկորդը, և նա
լուց մի րոպէ, մնալով չոգած. աչքերից հո-
սող կաթիլները միախառնվում էին առաս-
տաղից թափող կաթիլների հետ և թրջում
յատակը: Մի քանի րոպէ ջերմեռանդօրին
աղօթելուց և աղիողորմն արտասվելուց յե-
տոյ, նա հակուստի փէշերով մաքրեց աչքե-
րը, ոտքի կանգնեց և ձեռները կրծքին՝ կան-
գնած մնաց՝ հայեացքը յառած սենեակի մի ան-
կիւնը: Կարծես մի խորհրդաւոր բան կար
թագնված այդ անկիւնում, որ գրաւել էր
դժբախտ կնոջ խառն մտքերը: Ինչե՞ր չէր

մտածում նա—շատ բան. հիւանդ ամուսնու-
ծանր գրութիւնը, անմեղ տանջփող մանուկ-
ների դառն վիճակը, քաղցը, ծարաւը և այն
և այն... մտքեր վայրկենապէս համախմբ-
վեցին նա ուղեղում և մտաւոր աչքերի ա-
ռաջ. նա վնտուում էր մի եկը, մի յանկար-
ծական փոփոխութիւն այդ գրութիւնից ա-
զատվելու և կարծես այդ եկը, այդ յօյսը
նա սպասում էր խրճիթի անկիւնից....

—Ո՛չ, հարկաւոր չէ մեղանչել, պէտքէ
հնազանդվել ճակատագործին. Աստուած ողոր-
մած է. գուցէ նա մի օր կը խղճայ մեզ,
կայցելէ,—մրմնջաց ու մտաւ իր տեղը:

Փոքր ինչ յետոյ լոյսը բացվեց: Դրսում
լսելի եղաւ քաղաքի սովորական աղմուկը.
Նա կրկին վեր ելաւ՝ դուռը բացեց, դուրս
եկաւ և մի ընդհանուր հայեացք ձգեց
առջեռում տարածված քաղաքի վրա. ամե-
նից առաջ աչքի ընկան Սօլուկի մօտակայ
մեծաշէն տները և ապա նրա հայեացքը տա-
րածվեց աւելի հեռու....

Անձրել կտրվել էր. երկինքը սկսում էր
պարզել. ամպերը բարձրացած քամու շնոր-
հիւ, դէս ու դէն էին ցրվում, տեղի տա-

լով երկնքի յատակ հորիզոնին։ Արևը նոր էր
սկսել ցոյց տալ իր դէմքը, բայց շուտ-շուտ
ծածկում էր անցնող ամպերից ու կրկին
ազատվում։

Կինը վեր նայեց երկինք, խաչակինքեց
երեսը և ասաց լսելի ձայնով
—Փառք Քեզ, Աստուած, դարձեալ լուս
սացաւ, դարձեալ տուեցիր պայծառ օր մեռ
զաւոր մարդկանցու, փառք Քո անհուն դժա-
ռատութեան. . . .

Երեխաներն արդէն արթնացել էին և
«Ճայրիկ»—«Հայրիկ» էին կանչում։ Մայը
ներս գաղեց, բայց հայրիկը դեռ քնած
էր խոր քնով և չէր արթնանում։

—Հայրիկը քնած է, աղմուկ մի հանէք,
թողէք քնի, մեղք է, թոյլ ձայնով ասաց նա
երեխաներին։

Ապա մօտենալով պառկածին, վերմակը
կրկին ուղղեց; յետ քաշեց նրա ելեսից, որ
հիւանդն ազատ չնչէ։

—Խեզ մարդ, հաղիւ հանդիսատ քնեց,
հազիւ կորփեց դաժան հազը, սուս, ուղիք,
կամաց, զդուշացրեց նա և թողնելով հիւան-
դին՝ հաղցրեց երեխաներին—երեսները լըւ-

աց, անկողինները կուլուլելով կուտակեց մի
անկիւնում։

—Յուրա է, մայրիկ, տաք թէյ եմ ու-
զում, ասաց երեխաներից մէկը։

—Հաց եմ ուզում, յարեց երկրորդը։

Մայրը մի խօրը հօդոց հանեց և պա-
տասխանեց։

—Թէյ կայ, գաւակիներս, բայց շաքար
չը կայ, ինչո՞վ պիտի խմեք թէյը։

Միայն մեծ երեխան՝ մօտ 11 տարե-
կան մի աղջիկ, հասկացաւ «չը կայ» բառը.
իսկ երկուսը շարունակեցին պահանջնել—լա-
լով։

—Ը ը ը՝ ը ը ը՝ չայ, հաց ենք ուզում։

—Ի՞նչ անեմ, Տէր-Աստուած, որտեղից
գտնեմ; ինքնիրան խօսեց թշուառ մինը, — ոչ
միկոտէկչուննենք, հացի կտոր չը կայ, ոչինչչը-
կայ. երեկ սպառվեց վերջին 25 կոպ. և ե-
ղած հացը. խանութպանը այլ ևս չի տալ
ապառիկ, հացթուխը հաց չի տալ, որովհե-
տեւ ահագին պարտքեր ունենք վճարելու-
ախ, մի ճանապարհ ցոյց տուր, Տէր. . . ,

Նա անդիտակցաբար թողեց երեխանե-
րին և գուրս ելաւ՝ կարծես այնտեղ մի ճար-

գտնելու. սակայն միքանի րոպէ շուարած կանդնելուց յետոյ կրկին ներս մտաւ:

—Քիչ համբերեցէք, որդիք, մի քիչ էլ քաղցած մնացէք, թող հայրիկը զարթնի, նա կը բերի հաց:

—Քաղցած ենք, շարունակեցին մրթմրթալ անդիտակից մանրիկները. միայն նրանցից անդրանիկը՝ Առաղիկը, ըմբռնելով իրանց ներկայ թշուառութիւնը, լուս, ձեռաները կրծքին ծալած մտածում էր. թւում էր՝ թէ նա էլ էր աշխատում մի հնար գտնել փրկվելու աղքատութեան ճիրաններից:

Երեխաների համբերութիւնը սպառվում էր: Կինը մօտեցաւ՝ և ամենայն զգուշութեամբ ձայնեց ամուսնուն. փոքրիկ երեխան էլ ընկնելով հօր վրա թոթովեց՝ Հայրիկ, հաչ եմ ուժում, հայրիկ. . . .

Հիւանդն արթնացաւ. մի քանի վայրկեան ապուշի հայեացքով նայեց կնոջը, երեխաներին, իր շուրջը և ճիդ թափեց նըստելու: Կինը իսկոյն օդնեց նրան, շորերը հագցրեց, մի հին գզգլված շալ էլ դլիսին ծածկեց: Նրա հաղը դարձեալ սկսվեց. նա հազում էր և խորխում:

—Այսօր ինձ աւելի վատ եմ զգում, Հռիփսիմէ, խօսեց նա հաղիւ լսելի ձայնով:

Հռիփսիմէն էլ զգում էր այդ. և երկու խոշոր արցունքներ աչքերից գլորվեցին. նա շուռ եկաւ, մաքրեց աչքերը և դարձաւ ամուսնուն:

—Սիրելի Միքայէլ, մի վախենար, պինդպահիր սիրտդ, Աստուած ողորմած է:

Այդ միջոցին պայծառ արևը դուրս սլացաւ ամպերի տակից և կենսաբեր ճառագայթները առատօրէն սփռեց թաց երկրի վրա. բնութիւնը կարծես յանկարծ աշխոյժ կերպարանք ստացաւ և ժպաց. քազաքի կենդանութիւնն աւելացաւ:

Միքայէլը խնդրեց կնոջը, որ իրան խըրճը թից դուրս տանէ, արևի տակ նստեցնէ, նրա ճառագայթներով տաքանալու համար: Հռիփսիմէն արագութեամբ կատարեց ամուսնու ցանկութիւնը, խրճիթում եղած երկու հին տաքուրէտների մէկը դուրս տարաւ, դրեց խրճիթի պատի տակ, ապա հիւանդի թևից բռնելով, առաջնորդեց և նստեցրեց նրա վրա: Երեխաներն էլ դուրս վազեցին:

Հայրիկ, հայց ձաւ ծնի զով. —
Հայրը հարցը եց ինչը, թէ ունեն հայ
կամ փող, կինը պատասխանեց, որ ոչինչ չու-
նեն:
Միքայէլը մի դառն ախ քաշեց, աջքե
քերը մզեց թափվող արցունքներից, ու պար-
տելով գրավմանները, մի անկիւնում դառն եր-
կու հատ հինգ կոպէկանոցներ:
— Ահա, մեր ունեցած վերջին փողը,
Հռիփսիմէ, տնը Սատղիկին, թող հաց գնէ:
Սատղիկը վերցրեց այդ փողը և շնոր-
պեց հաց բերելու. իմկ երկու երեխաներն
ոկտեցին միժեանց հետ խաղալ, սոլասելով
հացին:

Հռիփսիմէն էլ ամուսնու մօտ մի քարի
փառ նստեց և ցաւակից հայեացքով դիմեց
նրան: ոլումազար իողձմելուրանու այս
Հիւանդը արեի ճառագայթներից կար-
ծեր ոյժ ստացաւ. նրան թւում էր, թէ մի
փոփոխութիւն է կատարվում իր մաշված
կ ծքի և ուժասպառ ջղերի մէջ. Սակայն թու-
քախոր անգութիւնիւնը կրծել էր նրա մարտ
մինը: թշուառ Միքայէլը սկզբում շատ առ-
ող էր եղած, նա: պինդ կազմուածքը, յաղ-

թանգամ հասակը, լայն կուրծքը շատերի
միջիցնրան որոշում էին, բայց կեանքի ծանր
պայմանները, մանր երեխանները ճնշեցին
նրան, ունեցած միակ խոճիթը հիմնովին ան-
պէտքացել էր բնակութեան համար, արիւն
քրտինքսի վաստակած միքանի րուբի փող:
աւազակները մտան դողացան և այնուհետեւ
աղքադութիւնը այցելեց նրանց ու գուրա
չելաւ. Երբեմն օրերով քաղցած են միացել
կնոջ հետ, նամուսը թոյլ չէ տվել խնդրել մա-
րդկանցից, իսկ փոխ տալ ոչ ոք չէ համաձայ-
նել, որովհետեւ գիտէին, որ նա ոչինչ չունի,
և այդպիսով այդ շարաբաստիկ պայմաննե-
րը առողջ Միքայէլին յեղափօխեցին. Կոտ
ուժեղ կրծքում նետեցին մաշող թոքախոր:
Այժմ նա չէ նմանում 8—10 տարի
առաջուայ Միքայէլին: Նա այդ բոպէին ա-
րեի տակ՝, աթոռի վառ նստած նմանում էր
գերեզմանից հանած մեռելի. . . Նրա սակառն
ու կաշին իրար էին կակել, այտոսկաները
տնկիւն էին. Նիհար քիթը, կարծես, աւելի
երկարացել էր, աչքը ը խորն էին բնկել իւ-
րանց վանդակների մէջ, կոպերի տակերը
կապուտիւն էին ինչպէս ուստած վերքերը. Ան-

խընամ թողած դլիսի մաղերը, մօրուքը և բեղերը այնքան էին երկարել, որ իրար էին խառնվել։ Վաղուց նա մօռացել էր հոգալ խուզվելու և սանրվելու մասին. ձեռների միուր հալվել էր և միայն երկար մատոսկը ուներն էին ցցվել. . . , և այս ամենի վրա հագած ցնցոտիները լրացնում էին նրա թըշուառ պատկերը. նա նմանում էր մի կախարդի, որպիսին յաճախ պատկերացնում են հէքեաթական գրքերում, բայց նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ աղքատութեան և դառնալից կարիքի մի մարմնացած արձան։

Նրա մօտ նստած էր իր վշտակից կինը։ Հոփիփսիմէն էլ իր ժամանակ բացված վարդ էր եղած. նրա գեղեցկութիւնը շատ փեսացուների սիրտ է կաշկանդել, նոյն իսկ հարուստ, դիրքով մարդիկ խնդրելիս են եղել նրա ձեռքը, բայց նրա սիրտը գտել էր իր սրտակիցը և նուիրված էր մէկին. դա Միքայէլն էր։ Նրանք սիրահարված, ամուսնանում են և ամուսնական առաջինքաղցր շըրջանը հանդիսաւ անց կացնում։ Օր աշխատում—օր ուտում էին։ Սակայն ամուսնութեան քաղցրութեան պտուղները—զաւակնե-

րը, հետզհետէ զդալի դարձրին կեանքի ծանրութիւնը. ի լրումն դրա անյաջողութիւնն էլ միւս կողմից թաթը մեկնեց այդ սիրահարների ընտանեկան առագաստի վրա. և աստիճանաբար փոփոխվելով — այլակերպվելով, ընկճվելով, նրանք հասել էին ներկայ վիճակին։

—Ո՞րքան քաղցր է կեանքը, Հոփիփսիմէ, ասաց հիւանդը կիսաժպտուն հայեացքով, բայց իմ կեանքի ճրագը հանդչում է. . . .

—Ի՞նչ ես խօսում, սիրելիս՝ ինչո՞ւ ես տանջում ինձ, ինչ կարիք այդպիսի յուսակուր խօսքեր ասելու, հաւատան և յուսան, որ կարողանաս։

—Է՞հ, հոգիս, իզուր ես աշխատում դատարկ յոյսերով մխիթարել ինձ. միթէ իմ հոգուս տրամադրութիւնը ինձ յայտնի չէ. ես համոզված եմ, որ մահս մօտ է, թերես առաջիս կանգնած է, սակայն խղճում եմ քեզ, սիրելիս, քեզ ու այս անմեղ զաւակներիս. ով կը պահէ սրանց. . . .

Եւ նա չը կարողացաւ շարունակել խօսքը. հազը խեղդեց կոկորդը, յուզմունքը ճըն-

շեց նրա սիրու ու աչքերից դուրս ցայտեց
աղի արցունքը:

Հռիփսիմէն խորապէս զգացվեց. նրա
կրծքից էլ դուրս հոսեց կուտակված վշտե-
րի հոսանքը. նա էլ սկսեց հեկեկալ, տրո-
վել և բաժանել ամուսնու վիշտը:

Փոքրիկները՝ տեսնելով իրանց հօրն ու
մօրը լալիս, թողեցին խաղը և ցեխաթաւալ
վաղեցին դէպի ծնողները, սկսեցին քաշքշել
մերթ մօրը, մերթ հօրը՝ ասելով.

—Մի լար, մայրիկ, թէ չէ մենք էլ կու-
լանք:

Այդ միջոցին Աստղիկը վարից բար-
ձրանում էր ձեռքին բռնած մի հաց ու կէս:
Երեխաները, տեսնելով հացը, թողեցին ծնող-
ներին ու ընկան հացի վրա, սկսեցին կտըր-
տել և ադահաբար ուտել:

Հռիփսիմէն զսպելով իրան, դոգնոցով
մաքրեց արտասուակոլով աչքերը, նիհար ե-
րեսը և դարձեալ միխթարեց ամուսնուն:

—Ես իմ սիրովս դժբախտացրի քեզ, իմ
անդին Հռիփսիմէ, շարունակեց հիւանդը.
բայց ես եսամոլ չեմ. վերջին անգամ ասում
եմ, որ ես իրաւունք եմ տալիս քեզ. ինձա-

նից յետոյ կրկին ամումնանալ մի արժանա-
ւոր մարդու հետ, թերեւ լաւ օրեր տեսնես...

—Մի տանջիր ինձ, հոգիս, մի խօսիր
այդ մասին. որ սիրող սիրու կարող է դա-
ւաճանել ամուսնու սիրահար սրտին. Իեղա-
նից յետոյ թող ես էլ չապրեմ ու նոյն իսկ
սրանք, այս մանր էակներն էլ աւելորդ կը
լինեն: Աստուած մի աբասցէ քեզ մի դըժ-
բախտութիւն պատահի, Հռիփսիմէն էլ քեզ
հետ միասին կիջնի գերեզման: Զէ որ այդ-
պէս ենք ուխտել:

Մինչ նրանք խօսում էին իրանց վըշ-
տերի հետ, երեխաները կշտանալով, աւե-
լորդ հացի կտորը բերին տուին հայրիկին ու
մայրիկին:

—Կեր, Միքայէլ, կեր, որ մնունդ ստա-
նաս, քանի օր է, ոչինչ չես կերել, ասաց
կինը:

—Ախորժակ չունիմ ուտելու, հոգիս, ես
միայն ուզում եմ կշտանալ այս պայծառ ա-
րևից, բնութիւնից: Ալս, օրե՛ր, օրե՛ր, ուր
թռաք, գնացիք...

Հռիփսիմէն էլ ախորժակ չունէր, նա

լրեց և ձեռքը դնչին կրթնած սկսեց դիւնել դիմացում փոված հարուստ շինութիւնները և մտածել:

Նա այդ րոպէին պատկերացնում էր դիմացի մեծաշէն յարկերում, չքեղ սենեակներում նստած ունեսոր, հարուստ մարդկանց, սեղանի շուրջը բոլորած թէյ են խմում, նախաճաշում, ծառաները հոգում են ամեն ինչ, պատրաստում և մատուցանում: Պարօնները ոչինչ կարիք չունեն—«չունեորութեան» հոգուը շատ հեռու է նրանցից և նոյն իսկ անծանօթ, փողն առատօրէն զրնդում է նրանց գրպաններում, նրանց կանյքը, որդէքը — «չը կայ» բառ չեն լսում. ամեն ինչ առատ է և աշխարհս նրանց ձեռքին մի քրահաճոյք է: Իսկ իրանք հէնց այդ րոպէին տանչւ վում են, տառապում են, լալիս են և մի բաժակ տաք ջուր, թէյ չունեն իրանց թոյլ մարմինները տաքացնելու, կազդուրելու:

—Երեխ այս է աշխարհիս օրէնքը, նրանք բախտաւորներ են, իսկ մենք դժբախտներ, թշուառ և անպէտք արարածներ, եղոափակեց իր մտքում Հռիփսիմէն:

—Միրելիս, Միքայէլ, այսուհետեւ ես

կաշխատեմ, հերթն իմս է, կը գնամ մօտակայ մեծատունների մօտ, լուացք կանեմ, սամօվար կը մաքրեմ և մեր հացի դինը կը հանեմ:

Միքայէլը նայեց կնոջ երեսին, իր ցաւադար հայեացքը նետեց նրա հայեացքին, կարծես ուղենալով մի նկատողութիւն անել և միայն միքանի վայրկեանից յետոյ՝ խօսեց.

—Հապա մանրիկներին ով խնամէ:
Հռիփսիմէն չը գտնելով պատասխան—
լոեց:

Արեելահարաւային կողմից միքանի կոյտ սև ամպեր դանդաղօրէն սահում էին երկնակամարի վրայով, որոնք մօտենալով արեին, սկսեցին ծածկել նրան երկրի երեսից: Հիւնդը, զոկվելով արեի շերմութիւնից, սկսեց մրսել: Նա խնդրեց կնոջը օգնել նրան ներս մտնել: Կինը նոյն զդուշութեամբ ճիգ թափելով, ամուսնուն քարշ տվեց խոնաւ խրճիթը և պառկեցրեց չուլերի վրա:

Յանկարծ հիւնդը սկսեց սաստիկ հազար, և արիւն թքել. Նա այլայլվեց. մոմի նման դեղնած երեսը ծածկվեց սառն քըր-

տինքով և մահուան հրեշտակը մտաւ իր իշրաւունքների մէջ:

—Միրելի Հռիփսիմէ ե-ե-ս-ս մեռնում
եմ... կմկմաց նա և լուեց....

Հռիփսիմէն, որ աւելը վերցրած մաքրում էր խրճիթի ցեխը, կայծակահար եղածի նման, դէն շպրտեց աւելը և վրա ընկաւ ամուսնու կրծքին:

—Միքայէլ, հողիս, սթափուիր, ա-իս
Տէր Աստուած, բժիշկ:

Բայց արդէն ուշ էր. Միքայէլը անշընչացել էր. աչքերը կիսաբաց՝ յառած էին առաստաղին, բերանը բայց էր մնացել, մի ձեռքը կրծքին դրած, միւսը մի կողմ մեկնած:

Խեղճ կինը խելագաշութեան հասած, սկսեց ճշալ, քաշքշել մեռածին, կարծես, ուզում էր խլել նրան մահուան զօրաւոր ճանկերից և նորից կեանք պարգևել. ծեծում էր կուրծքը, մաղերը փետառում և ողբում. արտասունքը վարարած աղբիւրի նման անընդահատ հոսում էր նրա բոցավառ աչքերից և թրջում թէ իր և թէ մեռած ամուս-

նու կուրծքը: Երեխաները լսելով մօր յանկարծական և տարօրինակ աղաղակները, ներս վազեցին և տեսնելով հօրը մեռած իրանք էլ ընկան նրա վրա և ձայնակցեցին մօր սղին: Փոքր ինչ յետոյ մօտակայ դրկիցներից միքանիսները եկան-տեսան այդ ցաւալի տեսարանը ու գիտենալով, որ մեռելին թաղելու ոչ մի կոպէկ չունի խեղճ այրին, սկսեցին խորհուրդ անել այդ մասին և վճռեցին իրար մէջ ու բարեկամների շրջանում նպաստ ժողովել:

Մի քանի ժամից յետոյ օտարները ցըրգեցին և մնացին դարձեալ նոյն թշուառները իրանց խոր վշտում պարուրված: Երեխաները, որոնք դեռ խոր չէին ըմբռնել բախտի հարուածի ծանրութիւնը, — զբաղվեցին իրանց մէջ խաղալով, իսկ մայրը բոլորովին ապուշացած, ուռած աչքերով նստել էր սիրեցեալ ամուսնու դիմակի մօտ, երբեմն ողբում էր և երբեմն մտածում դրութեան մասին: Աստղիկն էլ, փոքր ի շատէ խելահաս, նստել էր մօր կողքին և թոյլ չէր տալիս նրան շատ լաց լինել: Սյրի կնոջ մտքում ծագում էին հետևեալ մտքերը՝

—ինչպէս պէտք է ապրեն, որբուկները, ով պէտքէ աշխատէ և տուն բերէ նրանց համար օրական գոնէ ցամաք հացը։ Մինչ այդ դրութեան համեմը, Միքայէլը աշխատում էր մի հիւսնի մօտ և շաբաթավարձով հայթայթում էր ապրելու համաշանհաժեշտ չափով փոքր ինչ կերակուր։ Սակայն ամբողջօրեայ անընդհատ և ծանր աշխատանքը, անբաւարար և վատ պայմանները, մտածմունքը քայբայեցին Միքայէլի թուլակազմ մարմինը։ և թոքախտը սկսեց կտրել նրա կենաց թելը։ Ուրեմն ինչ անել։ Խեղճ կինը չունէր ոչ մի աղդական, եղբայր քոյր, որոնցից օգնութիւն սպասէր։ Ամուսնու միակ եղբայրը, որ հարուստ մաշտ. էր, մեռցրած իր խիզն ու մարդկային զգացմունքները, ամբողջ հարստութիւնը վատնում էր անառակ կանանց վրա։ Նրա համար չը կար եղբայր՝ վաղուց ձեռք էր վերցրել հարազատութիւնից։ նոյն իսկ մի անգամ հիւսնդը իր մեծ երեխային ուղարկել էր մի քանի կոպէկ հացի գին խնդրելու իր հարուստ եղբօրից, բայց վերջինս առանց կոպէկի յետ էր ճամբել քաղցած եղբօրդուն։

Գնալ, աշխատել զանազան տներում, միակ այդ ճանապարհն է մնացել, հապանվածէ երեխաներին։ անտէր թողնել նրանց դէմ մի րոպէ անկարելի է։ հետը տանել—նոյնպէս չի կարելի. մուրալ—դունէ դուռ ընկնել, փողոցէ-փողոց թափառել և ձեռք մեկնել անողորմ մարդկանց «Ո՛հ, ոչ Աստուած մի արացէ»—մտածում էր նա. աւելի լաւ է տասնեակ օրեր քաղցած-ձարաւ մնանք և մեռնենք, քան ձեռք մեկնենք. մուրացկանութիւնը ամօթ է և մարդկի չեն էլ գթալ. . . եղբափակեց նա մտքում. կանացի համեստութիւնը և ինքնասիրութիւնը աւելի մեծ ոյժով բռնկվեցին նրա մաշված կրծքի խորքում։

Նա քիչ յետոյ ուղարկեց Աստղիկին տաշգեր մօտ՝ յայտնելու եղբօր մահը։ Աղջիկը փաթաթելով գլուխը մի սպիտակ շալով, լուռ ու տիսուր գուրս ելաւ։

Ապա թշուառ Հռիփսիմէն նորից ընկաւ գիտակի վրա, լացեց ու մղկտաց, նրա աղեռղորմ հեկեկանքից խրճիթի խարխուլ պատերն ու տախտակներն էլ էին մրմռում. —

«թշուառ մաշտիկ», կածես շնջում էին
նրանք իրար մէջ:

— Ոչ, այլ ևս չարժէ ապրել այս ու-
նայն աշխարհում—վեր ցատկեց կինը. Ես կը
խելագարկեմ վշտից. չեմ կարող դիմանալ-
լաւ է այժմեւթ մեռնեմ, քան թէ խելքս
թոցնեմ ու խելագայ, կիսամերկ, փողոցներ
շրջեմ և գարշ մարդկանց կրքերի ու ծի-
ծաղի առարկայ դառնամ, ազգատի ապրելը
հայամ է, գերեզմանն է նրա հանգստու-
թեան բոյնը:

Այս խօսքերը մրմնջալով՝ նա շտապով
վաղեց դէպի պատի անկիւնը, այնտեղ տախ-
տակի ետևում թագցրած մի սրուակ հանեց,
ինչ որ հեղուկով լի և մի վայրկեան մը-
նաց երկբայ դրութեան մէջ:

Երեխաները կարծելով թէ մայրը նը-
րանց համար թագցրած միրգ է հանում,
ուշադրութեամբ սկսեցին դիտել մօր շար-
ժումները:

Մի քանի րոպէ թոյնի սրուակը ձեռքին,
թշուառ կինը մտումանքի մէջ արձանացած
մնաց կանգնած. նա չէր վճռում անելիքը.

ոչ թէ կեանքի քաղցրութիւնն էր նրան յետ
կասեցնում այդ մտքից, այլ որբուկների վի-
ճակը:

Ի՞նչ կը լինի նրանց դրութիւնը, ով
պէտք է մայրական խնամք տանէ նրանց վրա.
այս մտքերը հեռու էին պահում սրուակը
նրա շրթունքներից. . . .

Մայրական ուժեղ սէրը և աղքատու-
թիւնից առաջացած յուսահատութիւնը կըռ-
գում էին իրար հետո. — «Իսկ եթէ կենդա-
նի մնամ—միթէ աւելի վատթար չի լինի
նրանց դրութիւնը—շարունակեց մտածել նա.
չէ որ դարձեալ այս չորս տախտակապա-
տի մէջ քաղցից պէտք է մեռնենք. մինչդեռ
իմ մահից յետոյ թերես մարդիկ խղճան որ-
բերիս, որբանոց տանեն, պահեն ու մեծաց-
նեն. Ոչ, ոչ, ես անզօր եմ նրանց տառա-
պանքը թեթևացնելու. ես մի թոյլ կին եմ.
իմ մահը, թերես նրանց նպաստաւոր լինի»:
— նրա աչքը կրկին ընկաւ Միքայէլի սոսկա-
լի հայեացքին, որը կարծես ասում էր. «Դու
էլ մեռիր, հերիք տանջվես»:

—Մայրիկ, մայրիկ ջան, յանկարծ լսվեց
փոքրիկ երեխայի լացը:

Մայրը սթափվեց մանկան ձայնից, սրու-
ակը դրեց մի կողմ և գրկելով փոքրերին—
պինդ սեղմեց կրծքին, համբուրեց նրանց:

—Թշուառ զաւակներս, շնչաց նա,

—Մայրիկ ջան, մրտում եմ. ինձ համար
նոր գուլպաներ, նոր ոտնամաներ կառնես,
խօսեց միջնակ երեխան, որի ոտները հա-
մարեա բուրովին մերկ էին, և հագած ու-
նէր միայն պատառոտած կօշիկներ, որոնց
միջից դուրս էին ցցվել ոտների մատները:

—Ինչ էլ, մայրիկ ջան, եշ էլ եմ ու-
ժում թաժա շորեր, թոթովեց փոքրը:

Հսիմախմէն նորից յուղվեց. նա չունէր
պատամխան, նրա աչքի առաջ կանդնած էին
իր հարաղատ մանրիկները, պատառոտած հին
շորերով, մերկ, կիսաբաց ծնկներով ու կի-
սաբօրիկ ոտքերով—Եթէ հիւանդանան նը-
րանք—Թշուառ կնոջ վիշտը կը կրկնապատ-
կեն, սակայն ինչ անէր, ինչով գնէր, փող
չունէր, նոյն իսկ վաղուան համար հացի կո-
պէկներ չունէր. . . .

Դարձեալ փոթորկվեց նրա ներքինը.
յուղվեց սիրտը. մայրական զգացմունքը մի-
րոպէ լնկճվեց սոսկալի իոականութեան կոր-
ծանիչ պատկերից: Նրա շնչառութիւնը ա-
րագացաւ, աչքերը լցվեցին կատաղութեան
կրակով և նա սկսեց զառանցել, զանազան
շարժումներ գործել. նա գրկեց երեխաներ-
ին նորից համբուրեց, սեղմեց կրծքին այն-
քան պինդ, որ նոյն իսկ նրանք ցաւից լաց
եղան. ապա մօտեցաւ անշունչ դիակին, ըն-
կաւ նրա վրա, լացեց, համբուրեց սառն դա-
լուկ ճակատն ու մրմնչաց.

—Քեզ մենակ չեմ թողնիլ, գալիս եմ,
անդին Մկքայէլս:

Ապա շտապելով վերցրեց սրուակը, ա-
ռանց այս ու այն կողմը նայելու, երեսը ըլլ-
ջեց երեխաներից, կարծես՝ վախենալով, որ
նրանք—մանկական սիրալիր դէմքով կը ցըն-
ցեն իր սիրտը և յետ կասեցնեն. . . .

—Ներիր ինձ, ով մարդասէր Աստուած,
մրմնչաց նա և սրուակը մօտեցրեց գողկո-
ջուն շրթունքներին. . . .

Երեխաներից մէկը նկատելով այդ՝ ձեռ-
քը մեկնեց, ասելով՝

—Մայրիկ ջան, մի քիչ էլ ինձ տուր:

—Ինչ էլ, ինչ էլ, թոթվեց միւսը:

Մանկական այդ անմեղ թոթովանքները նորից սթափեցրին մօրը և նրա ձեռները յետ կացան բերանից:

—Անմեղ գառնուկներ, դժուք էլ այդպէս վաղ զզուեցիք ձեր մատաղ կերանքից, ասաց նա, նայելով նրանց վրա մայրական ամենաշերժ սիրոյ հայեացքով:

Այդ վայրկեանին ներս մտաւ գատարկածեռն Աստղիկը:

—Ո՛չ, չեմ անիլ, խօսեց նա ինքն իրան և թունալից սրուակը պատուհանից դուրս նետեց դէպի վայր, աշխատելով, որքան կարելի է դէն շպոտել հեռու, շատ հեռու . . .

Եւ իսկոյն արագաբար ձեռքերը մեկնեց դէպի շփոթված մանուկները և սեղմեց նրանց իր ալեկոծ սրտին:

—Սիրելի զաւակներս, ձեր մայրը միայն կը հասկանայ ձեզ, շնչացին նրա այրվող շրթունքները:

Մի քանի բոպէ դգվելուցյետոյ, նրա հայեացքն ընկաւ ամուսնու դիակին, որը կարծես իր խորհրդաւոր անշարժութեամբ և մորւ

մոքիչ տեսարանով մի բան ասաց կնոջը, և սա, յանկայծակի, մեքենայական շարժումով դէն հրեց զաւակներին ու տարօրինակ ճշոցով ընկաւ ամուսնու վրա.

—Դու մեռար, հա, հա, սովից մեռար, հա, հա, անբնական ժայիտով բացականցեց նա. Միքայէլ, մի մեռնիր, ես մեռակ չեմ մնալ:

Նրա աչքերը ուռեցին և լցվեցին մի տեսակ վայրենի արտայատութեամբ:

Նա արդէն խելագար էր . . .

Մանուկներն իսկ սարսափեցին մօր արտասավոր կերպարանքից և շփոթված սկսեցին լաց լինել:

—Հա, հա, հա, հաց էք ուղում, հայրիկին ասացէք, ես փող չունեմ, դարձեալ զառանցեց խելացնոր մայրը:

Փոքր ինչ անց դրկիցները նորից ներս թափվեցին խրճիթը . . .

Խելագար կինը — այլանդակ կերպարանքով, դզգզված մազերով, մօտեցրել էր կըրծքին երկու փոքրիկներին և այնքան պինդ էր սեղմում, կծոտելով նրանց համբուրում, որ նրանք սարսափահար եղած — «Վայ, մայրիկ

ջան, մայրիկ ջան» էին կանչում։ Իսկ Աստղիկը մի անկիւնում կուշ եկած, հագուստի փեշերով աչքերը ծածկած, մղկում էր....

Ամեն ինչ պարզ էր։

Դրսում արեը կրկին աղատվելով ամպերից շարունակում էր ջերմութիւն թափել թաց երկրի վրա։

Մի քանի անհոգ ճնճղուկներ նոյն խրճիթի տանիքի վրա նստած, իրանց ծլվլոցն էին դցել, որ միախառնվում էր այդ անհոգի տակից լսվող անտեր մնացած որբիկների հեկեկանքների հետ։



28606

Նոյն հեղինակի լրյս տեսած աշխատասիրութիւնները՝



1.	ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍԵ՞՝ (վէպիկ) գինը	.	30	կ.
2.	ԳՐԲԱՅԻ ԱՏՐՈՒՄՆԵՐ (պատկեր.) գ.	.	5	»
3.	ԿԵԱՆՔԻ ԲՈՄԱՆԻՑ (վէպիկ) գ.	.	25	»
4.	ԷՄԻԼ ԶՈԼՈ (փոքրիկ տեսութիւն)	.	5	»
5.	ԼՈԽՄԱՆԻ ՀԵՔԻՄԸ (պատկեր.) գ.	.	8	»
6.	ՌԱՖՖԻ (համառօտ տեսութիւն) գ.	.	10	»
7.	ԿԵԱՆՔԻ ԽՈՐՃԵՐԻՑ (պատկերներ) գ.	.	20	»
8.	ԱՌԱՋԵՆ ՄՈՒԲԱՑԿԱՆՈՒԹԻՒՆՆ (պատկ.) 8			»
9.	ԱՐԲԵՅՈՎԻ ԶԱՏԻԿԸ (պատկեր.) գ.	.	3	»
10.	ՍՈՒԱՑԻ ՆՇԱՆԴԻՔԵՐԸ գ.	.	15	»
11.	ԹՇՈՒԱՌՆԵՐԸ (պատկեր)	.	3	»

Թարգմանութիւնները՝

1.	ԱՆԻՒՑԱ (Զեխովից) գինը	3	կ.
2.	ԴԻՄԱԿ (Զեխովից) գինը	5	»
3.	ՆԻՆԻ ՀԱՄԱՐ զինը	3	»

Դրերի պահեստը — Թիֆլիս — «Գուտտեն-բերգ» գրավաճառանոցում (Дворцовая ул. № 9, въ домъ Лалаева, рядомъ съ Коммерческимъ банкомъ).

Հեղինակին դիմողները կստանան մինչև 50 րուբլին $33^{\circ}/_0$, աւելի պահանջողները $37^{\circ}/_0$ դեղչ։
Հասցէն նոյն գրախանութում։

ԳԻՆ է 8 ԿՈՊ.